

ՄԱՍԻՍ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑԻ

Ալեսոր լերան
Սպիտակ գըլխին
Նկան—դիզւեցին
Զարագոյժ ամպեր.
Ճընշեցին նորա
Պանծալի գագաթ,
Կապարի նըման
Ծանրացան վերան:
Մըռայլեց Մասիս,
Ֆանգոտեց Մասիս,
Խըստաղէմ մի հօր
Ճակատի նըման.
Խաւարեց իմ շուրջ,
Մըթնացաւ իմ շուրջ,
Եւ երկիւղ ու դող
Տիրեցին սըբտիս.
Լըռութիւն խորին:

2

Սըրբազն Մասիս,
Ալեզարդ Մասիս,
Լեզուդ բաց արա
Զաւակիդ առաջ.
Ինձ լալտնիր, լալտնիր,
Սըրբազն Մասիս,

Թէ ինչու արդեօք
 Աստըծոյ օրին
 Մըռալլում ես գու
 Տըխրագին ալդքան,
 Մինչդեռ լոլս-արև
 Ամպերի լետից
 Դեռ փայլում է հաշտ
 Աշխարհիս վերան,
 Քո զաւակըն եմ,
 Հարազատ որդիդ,
 Աչքերիս արցունք՝
 Առաջիդ կանգնած,
 Աղաչում եմ ես,
 Պաղատում եմ ես,
 Իմ առջև բացիր
 Քո անհուն թախիծ,
 Քո սըրտի խոցեր:

3

Պատասխան չը կալ.
 Լըռութիւն խորին:
 Բայց կամաց կամաց
 Վերսեից ահա
 Ականջիս հասաւ
 Խըլաձախն որոտ.
 Մի վալրկեան լըռեց,
 Դարձեալ մի վալրկեան,—
 Եւ ճայթեց լանկարծ
 Սեացած երկինք,
 Որոտաց—գոռաց
 Կատաղի ձայնով.
 Եւ արար-աշխարհ
 Զարհուրած՝ ասես
 Արթնացած քնից՝
 Պըղըրդաց իսկոյն,

Եւ խոշոր խոշոր
Անձրևներն լորդ
Պատառւած երկնից
Զալրացած ուժգին
Թափւեցին գետին,
Մայր հսղի վերալ:

4

Բարկութեան արդեօք
Դըղըրդիւն էր այն,
Որ ալնքան ահեղ
Որոտաց գըլխիս:
Արդեօք ծեր Մասիսն
Կըշտամբում էր ինձ,
Անարժան որդուն,
Յանցանքիս համար,
Մեղքերիս համար.
Թէ լացի, կոծի
Հեկեկանք էր ալն,
Որ ելաւ պայթած
Ծերունու կըրծքից.—
Չը գիտեմ ես ալդ:

5

Ես տեսալ միալն,
Ինչուս սուրբ լերան
Գագաթից յանկարծ
Վըտակներ ուռած՝
Աղի-ջերմ-առատ
Արցունքի նըման
Կարկաջով արագ
Թափւեցին ներքւ.
Ես տեսալ ինչպէս
Ողբագին ձալնով
Իմ մօտով անցան,

Դիմեցին հեռու—
 Դէպի մալը-Արաքս,
 Դէպի մուլթ ջըրեր...
 Բալց ալն հվ գիտէ.
 Գուցէ լեառըն էլ
 Ժամանակ-առ ժամ
 Վըշտանալ գիտէ,
 Հառաչել-ողբալ
 Եւ մարդկանց նըման
 Աչքերից առատ
 Արցունքներ թափել,
 Ողողել գետին.
 Գուցէ այն միայն
 Արցունքներ էին,
 Որ սարի գըլխից
 Կարկաջում էին...

Մասկու. 1889 թ. մարտ 17.